Ավետիք Իսահակյան

Արծի՛վ սևաթույր, արծի՛վ լեռների

Արծի՛վ սևաթույր, արծի՛վ լեռների,
Հանգիստ ու հրպարտ ճախրում ես բարձրում,
Ա՜խ, նայի՛ր՝ սիրտըս – շղթայված, գերի
Մարդկանց օրենքով, ստրուկ աշխարհում:
Ազատ միտք ու խոսք, ազա՛տ երգ ու սեր
Ողջ բրոնաբարված ծաղրով անհամբույր.
Թևերը հոգուս – աստղոտ երազներ,
Թոշնած, խորտակված, արծի՛վ սևաթույր…
Խրրի՛ր ճիրաններդ, արծի՛վ լեռների,
Կրծքիս մեջ վշտոտ ու սիրտըս հանի՛ր
Թրոցրրու Մասիս – գահույքն աստղերի
Բարձրր և հեռու աշխարհից նանիր.
Եվ թաղիր սիրտըս – ըմբո՛ստ, վիրավո՛ր,
Լեռնագագաթին՝ խրրո՛խտ, ահռե՛լի.
Լեռնագագաթին՝ վրսե՛մ ու հզո՛ր,
Արծի՛վ սևաթույր, արծի՛վ լեռների…

1907